



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4515-4526

281.69
S-16

1000000

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՐՏԱՍԱՆՆԵՑ

Յ. ՄԻԲԱՅԼԼԵԱՆ

ՉՄԻՌՈՒՆ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՄՍԵՐԵԱՆ

—
1878

37

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ ՄԸ

10990

ԱՐՏԱՍԱՆՆՑ

Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

82-80251

ԶՄԻՌԻՆ

ՏԳՅԳՐՈՒԹԻԻՆ Գ. ՄՍԵՐԵԱՆ

1878

Սոյն նառը, ջմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանին մէջ փետրվարի 23ին կատարուած վարդանանց հանդէսին արտասանուած է:

Ջմիւռնացի Մեծ. ազգային մը զայն Մասիսի ղրկեց սակայն ջրհրատարակուեցաւ:

Մասիս իւր 2102րդ թուոյն մէջ կ'ըսէր թէ ձեռքը ջէր հասած. թէեւ վերջէն վերոյիշեալ ազգայինը եւ աւանդաբերը հակառակը հաստատեցին մեզ:


Ա. Մամուլ ջէր հրատարակուեր այն ստե՛ն. Արշալոյսի հանգուցեալ քարեյիշատակ խմբագիրը պատճառներ ունէր յիշեալ նառը ջրհրատարակելու, սակայն ջնք կրնար կարծել թէ միեւնոյն պատճառներն ունեցած լինի եւ Մասիս . . . :

Ինչ եւ է, ահա այսօր յատուկ տետրակով մը կը հրատարակեմք զայն նկատելով որ ամեն գրական գործ, որ ջափ իսկ աննշան, իւր օգուտն ունի ընկերութեան մէջ:

Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Աշակեցի Ս. Մ. վարժարանի:

1878 յունիս 15



17509-58

ԵՏԵՆՆԻՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Գերապատիւ Հար.ք և ազնիւ հայրենակից.ք:

Չբխոյ առիթ մը այնքան պատեհ, պատմութեան վրայ խօսելու՝ որչափ քաջի մը, հայրենեաց նահատակի մը յիշատակը, որ տարիներու այն ահագին կոյտք պատուելով հասած է մինչև մեզ և այսօր մեր սիրտը բարխել կը տայ:

Ժամանակէ մը հետէ ցաւ 'ի սիրտ դիտած էի որ բնկերակիցներէս ոմանք, պատմութեան ուսման կարևորութիւնը չզգալով՝ ցուրտ և անտարբեր դիրք մը բռնած են դիտութեան այդ ճիւղին նկատմամբ, և իբր զուարճութիւն կամ առ հարկի միայն կ'ուսնին պատմութիւնը: Յաւալին այն է թէ սոյն անհիմն կարծիքը ոչ թէ միայն բնկերակիցներէս ոմանց մտքին, այլ հայր ժողովրդեան չափահաս մասին մէջ իսկ մուտ դուռն է, և պատմութիւնը առասպելի հետ կը շիտթուի և հետեւապէս դասախօսուելու անպատշաճ կը նկատուի: Սոյն ցաւալի գաղափարն եթէ ոչ լսելու, գէթ ջրելու համար պարտ անձին սեպեցի երկատղիւ զգացնել բնկերակիցներու պատմութեան օգտակարութիւնն ու կարևորութիւնը. և ահա ինչպէս որ կը տեսնէք, այսօր Վարդանանց սոյն խանդավառ հանդիսին բարեպատեհ առիթիւ բնկերակիցներու խօսելով՝ մինչոյն ժամանակ ձեր հայրենասէր ակմբին 'ի լուր խօսելու բարեբաղդութիւնը կ'ուսնենամ: Աւագի մեր խօսքերու տեսակետն ու

նպատակը պիտի լինին՝ թէ ինչ է պատմութիւն, թէ ինչ գրութիւն ունէր հին ատեն և ինչ այժմ, և թէ ՚ի մասնաւորի ինչ վիճակ ունէր Հայոց մէջ հին ատեն և ինչ այսօր ու ինչ են պատմութեան օգուաները:

Ա

Պատմութիւնը դարերու բանալին, ժամանակներու լոյսն, դէպքերու աւանդապահն է: Հայելի մ'է նա ուր ժամանակը կը ցողանայ իւր բազմադիմի գոյներով: Չքկայ իրողութիւն մը, դիպուած մը, արկած մը, որ պատմական էջերու չըհպատակի, չըկայ անձ մը, վեհապետ մը, որ պատմութենէն անկախ՝ անոր դատաստանին ու վճռին ենթակայ չըլլայ: Անիկայ ամեն տեղ ու ժամանակ աւաչառապէս կը հռչակէ ամեն յաղթանակ, ամեն պարտութիւն. վեհանճնութիւն ու վատութիւն միւսնայն ժամանակ երևան կը հանէ, չըխնայելով միոյն գովեստ ու ներքող, միւսին անէծք ու պարտաւ:

Պատմութեան ներքոյներն ժամանակին ազդեցութեամբ չեն նսեմանարև անոր գծած վատանունութեան դրոշմներն դարուց հոսանքին առջև անջնջելի կը մնան:

Այսպէս պատմութիւնն այսօր նահատակ մը, Վարդան մը կը յիշեցնէ մեզ որու անուան փայլը 1428 երկար տարիներ չեն կարողացած նսեմացնել. մասնիչ մը, Վասակ մը կը յիշեցնէ մեզ որու վատանիչ դատակնիքը անջինջ մնացած է 15 երկար դարերու հոսանքին առջև:

Բ

Պատմութիւնը այն օրէն սիսաւ, յորում մարդիկ աշխարհիս ստեղծմանէն ՚ի վեր իրենց բնիկ երկրին նկատմամբ պատահած և կամ այնպէս կարծուած դէպքերուն այլազան աւանդութեանց գոյն ու կերպարան տուին և գրաւոր յիշատակադիրներ անդիր աւանդութեանց յաջորդեցին: Այս մեր քսածին նախատիպարը կրնայ սեպուել Մովսէսի գրած Հին կտակարանը որ մէկ նկատմամբ Երբայական ազգին պատմութիւնն է: Սակայն

պատմութիւնը հիմնապէս Յունաց և Լատինացւոց մէջ ծագում առած է: Երբ նկատեմք պատմութեան մասնկութիւնը, անկարելի է զայն վէպէ մը զանազանել: Նախապէս Հերոդոտ մը կը ներկայի մեզ, որու գործին առաւելութիւնները խոստովանելով հանդերձ՝ չեմք կարող ծածկել իւր աղայամիտ դատողութիւններն ու ծայրայեղ դիւրահաւանութիւնը: Հերոդոտ Քրիստոսէ 480 տարի յառաջ կ'ապր'ր. Եգիպտոս, Իտալիա և Յունաստան ճամբորդելով՝ պատմական շատ մը ճշմարտութիւններ հաւաքած էր թէև, սակայն իւր գործին մէջ որչափ ճշմարիտ, այնքան սուտ կը գտնուի: Հեռուաթողութեամբ բուն պատմականը, այլ նոյն խի վիպասանական օրինաց դէմ՝ կը գործէ իւր ծայրայեղ սուտերով, պարզ և մեկին դէպքերու մօտ գերբնական ու բնականցական բաներ կը պատմէ որոց նմանը դիցաբանութեանց մէջ միայն կը տեսնեմք: Այս ամեն թերութիւններով հանդերձ Հերոդոտոս դարձեալ պատմութեան հայրն է իւր ոճին ու երևակայութեան առաւելութիւններով:

Իրեն անմիջապէս յաջորդած է Թուկիդիտէս. այս պատմադիրը ճշմարիտ պատմութեան հիմունքը գրած է, ճշմարտախօս է նա, իւր ժամանակին ընդհանուր ղեղման, այն է կողմնապահութեան չէ յարած և Հերոդոտեան աւելորդապաշտութիւնը բնաւ չերևիր իւր գործին մէջ: Թուկիդիտէս մեռաւ և Յոյն պատմադիրներու մէջ իրեն արժանի յաջորդ չըթողուց:

Բսենոֆոն (340 Ք. Ա.) որ բիւրուց նահանքը գրած է, պատմագրական էական տարրներով աւելի Հերոդոտի կը նմանի քան թէ Թուկիդիտէսի: Բսենոֆոն իւր այս գործին մէջ կը ջանայ հայերն անհիւրասէր ցոյց տալ, թէև Արևելեան ժողովրդոց հինաւուրց աստիճանութիւնը բացայայտ է:

Հայ աշխարհի վրայ Ստրաբոնի ընդ ազօտ յայտնած դաղափարներն բաւական լոյս տուած են մեր պատմութեան:

Լատինացիք ինչպէս ամեն գիտութեանց, նոյնպէս և պատմութեան մասին Յունաց հին նախանճորդը եղած

են. Թէև իրենց մէջ աւելի ուշ սկսած է դիտութեան այս ճիւղը, սակայն Թուղիդիտէսի համաստեճան պատմագիրներ ունեցած են. երևելի են Լիվիոս (ժամանակակից Գրիստոսի), Տակիտոս, Կլինդոս—Կուրախոս և այլք, որոց հանգամանաց ու թերութեանց վրայ ուրոյն ուրոյն խօսիչ աւելորդ կը սեպեմք:

Այս իրաւ է թէ ամեն պատմագիր, շատ քիչ բացառութեամբ, իւր ազգին, իւր երկրին, իւր ժողովուրդին, իւր իշխանին տկար կողմը գգուած և պարզապէս իւր ժողովուրդին ճաշակին յարմարած է, այս քննութեացքը անաչառ պատմութեան անաչառ պահանջմանց բոլորովին հակառակ է:

Այսպէս, կը տեսնեմք Հերոդոտոսը հետաքրքիր և դիւրահաւան ժողովուրդի մը հանգամանաց յարմարելու պատրաստ, կը տեսնեմք Քսենոֆոնը Աղեւակիանաց ազդեցութեանը տակ՝ չողքորթելու պարտաւոր, Լիվիոսը, իշխանի մը հպատակութեանը տակ, ազգամուլ ու կրօնամուլ լինելու ստիպուած: Թողլով այս ամենք, հին գրքերու պակասութիւն, աւանդական արկածից անթափանց մթութիւն, հասարակային դիւաններու մէջ հին արկածներու նկատմամբ ակնարկութեանց պակասութիւն ապահոված են հին պատմագիրներ ապագայ քննադատութենէ:

Ասոնք ընդհանրապէս սիրած են իրենց ազգին ծագումը դից և աստուածոց մէջ փնտռել, և այսպէս կրօնական տարրը իրենց ազգին ծագումէն և պատմութեան սկզբնաւորութենէն ՚ի վեր խառնուած է ընկերական տարրին հետ: Այս պատմագիրներ գրեթէ միշտ հստատրական ձևեր, Երևակայական (փիլիսոփայական) հանգամանքներ ներմուծած են իրենց դրուածոց մէջ իբր թէ ասոնք պատմական յիշատակագիրներ չըլինէին, այլ պարզապէս ճառեր ու քերթուածներ: Եթէ կայ ամենամեծ թերութիւն մը հին պատմագիրներու մէջ, այն է թէ ասոնք ընդհանրապէս իշխաններու շահատակութիւններ, հսկաներու դիւցազնութիւններ, վեհապետաց և աղեւակիաններու արշաւաններ նկարագրած են և գրեթէ երբէք ժողովրդային բարք ու վարք, վասն զի

ասոնք ժողովուրդը, իբրև անարգ բան մը՝ աղեւակիանաց անհպելի նկատած և այս երկու հզօր տարրներուն այն է ժողովուրդին և աղեւակիաններուն մէջ սլատուարներ երևակայած են: Այս գրութիւնը սրչափ քայքայիչ նոյնչափ ախորդեղած է հին առնէն. տակաւին Վրդգարուն Անկիացի փիլիսոփայ մը (Հօսիս), ժողովրդեան բանականութիւնը յիմարաբար ուրանալով՝ կոյր հնազանդութեան կը յորդորէր դայն:

Գ

Պատմութիւնը վերջին ձրդ գարուս մէջ մեծ քայլ առած է, մանաւանդ Գերմանիա, Անկիա և Իտալիա: Նկարագրութիւններու, խօսակցութիւններու (dialogue) ճառերու անտեղի դրութիւնը վերջած է և այժմեան պատմագիրներու գործոց մէջ ուղիղ տրամաբանութիւն, անկողմնազահութիւն և մասնաւորապէս իմաստասիրութիւն ամեն ուրեք կ'երևի. (Թէև, այս սլ անտրանալի է թէ, կան պատմագիրներ որոնք իրենց ազգին այլևայլ տեղ ու ժամանակ կրած պարտութիւնները զանազան պատճառարանութիւններով արդարացիներու կը ջանան):

Այս բարեփոխումը զանազան պատճառներու կրնայ վերագրուիլ, նախ, գրքեր և յիշատակարաններ առատ են այժմ, Կիւթթեմպերի մեքենան ամեն տեղի համար կը լրացնէ այս փոխոյքը, կայ հեռագիր, կայ թերխոս (հեռածայն): Իրաւում մը, արկած մը սրչափ խիստ աննշան՝ անմիջապէս կը տարածուի ամեն տեղ, քննադատական դրութիւնը, թէև խիստ շատ բացառութեամբ, ընդունուած է և մարդիկ քննադատութեան շնորհիւ կարող են մեր նախնիքներէն իբր հաւատոյ մատուց նկատուածներուն ստութիւնները ՚ի վեր հանել և փոխադարձաբար ինչ որ երէկ կ'սկսած էի՝ այսօր գիտութեանց կարգը դասել:

Այսպէս, պատմութիւնը, որ՝ առնէն մը՝ իբրև անտրան ուսում, աննշակ թողուած էր, գրեթէ կէս դար յառաջ գիտութեանց կարգը դասուեցաւ: Սեպաձև ու

սրբադրոյմ տառերու ընթերցումը հնութիւնները հետ-
զհետէ մեկնեց և պատմութեան մութ տեղերը պար-
զեց, աւերակներու փոշիներուն ներքև ծածկուած ար-
ձանագրութիւններ աւանդութեանց քողը պատուեցին,
Պ. Լքնորմանի, Հինքսի, Շուլցի և այլոց խուզարկու-
թիւնները գիտական աշխարհի նորանոր վեհապետներ
և անկեալ իշխանութիւններ պարզւեցին. քայլ մը ևս
և հնութեան մէջ չբարձր մնայ պատմական գաղտնիք
մը որ Եւրոպայի առջև պայծառ ու մեկին կերպիւ չք
պարզուի:

Դ.

Սակայն որչափ որ պատմութեան ուսումը յառաջա-
դիմէ, որչափ նա պատմական նորանոր գիւտերով ճո-
խանայ, դարձեալ ամուլ և անօգուտ կրնայ դառնալ,
եթէ զայն խնաստասիրելով անորմէ կարելի եղած օ-
գուտը չք քաղեմք: Իէպէի մը ծանօթութիւնը այն ժա-
մանակ միայն կրնայ մեզ օգտակար լինիլ, երբ մենք
այդ գէպքը խնաստասիրելով մեր քայլերը, մեր ապա-
դայն անոր համեմատ կ'ուզեմք, ապա թէ ոչ սորվել
գէպք մը թուականներ միտք պահելով, առանց սակայն
խնաստասիրելու, աւելի թութակի կը պատկանի քան
թէ բանաւոր արարածի մը: Ուրեմն, պատմութիւն և
խնաստասիրութիւն համահետ են, ուր որ չըկայ քննա-
դատութիւն անդ ճշմարտութեան գոյութիւնը կասկա-
ծելի է, քննադատութիւն, որ փիլիսոփայութեան ծա-
գում տուած է: Պատմութեան ուսումը ամեն հասակի
ու վիճակի տէր մարդկան օգտակար է, թողլով որ նա
առաքինութիւն ու մարտիւն կը հռչակէ մին գովելով
միւսը պարսաւելով, այլնոյն իսկ մարդկային ազգի վարքն
ու բարքը կ'ուզէ և զայն գէպ ՚ի կատարելութիւն կը
գրդէ. իւր անաչառ օրինակներով պարզ և աննշան
մարդիկ ազգագային մէջ մեծ դեր կատարելու կը պատ-
րաստէ, վեհապետներ առաքինի լինելու կը հարկադրէ
ցոյց տալով անոնց ճշմարիտ փառաց արահետք, զօրա-
կաններ սրութեան կը գրգռէ փառաց դավիններ խոս-

տանալով անոնց, դպրոցականներ ուսմանց ու դիտու-
թեանց հմտանալու կը մղէ գրական փառաց վեհութիւնն
ու փայլն որոշակակի ցոյց տալով:

«Պատմութիւնը, կ'ըսէ Ռօլէն, մարդկային ազգի վար-
ժարանն է»: Անդ կ'ուսնի մարդ բարոյականութիւն,
կ'ուսնի առաքինութիւն, կ'ուսնի թէ ինչ արդիւնք ու-
նեցած են անհատական ու հաւաքական շարժումներ,
թէ ինչ վախճան ունեցած են վատեր ու քաջեր, անդ
կ'ուսնի վերջապէս անցեալը խնաստասիրել և անցեալին
նկատմամբ ներկայն քննադատելով միևնոյն ժամանակ
ապագայն ուզել: Պատմութեամբ մարդուս միտքը կ'ընդ-
լայի, քիչ ժամանակի մէջ շատ ազդած կը լինի նա այլ
և այլ ազգաց ու ժողովրդոց, հեռաւոր և անծանօթ
երկիրներու այլազան օրինաց, վարուց և բարուց ծանօ-
թանալով: Պատմութիւնն ընդհանրապէս սոյն օգուտներն
ունի այն մարդոց որոնք սակայն անկէ օգուտ քաղելու
նպատակաւ կ'ուսնին զայն: Ի մասնաւորի հարկէ ուսնիլ
Ազգային պատմութիւնը, որ խանդավառ ու բրտաուռ չ
յիշատակներ կը գրգռէ իւրաքանչիւր անհատի սրտին
մէջ և ցոյց կը տայ անոր թէ իւր նախնիք ինչեր ք-
րած են ու շինած ազգային ընդհանուր յառաջագի-
մութեան համար:

Ազգեր կարող են իրենց հին պատմութիւնը լաւ ի-
մաստասիրելով ապագային համար յառաջադիմական
արահետներ յարդարել: Նոյն իսկ անկեալ ազգեր պատ-
մական յեղաշրջումներէ խրատեալ, կրնան աւելի զգու-
շաւոր ընթացք մը բռնելով իրենց անկախութիւնը վերս-
տին ձեռք ձգել: Եւ սակէ աւելի մեծ օգուտ հաղուա-
գիւտ է բատ իս ազգի և նոյն իսկ անհատի մը համար,
երբ մանաւանդ այս անհատը այնպիսի ազգի մը կը վե-
րաբերի որ գերութեան ճաշակը պէտք եղածէն աւելի
առած է . . . :

Ե

Հայք, իրեն հին ազգ, պատմութիւնը մշակած են
եթէ ոչ ստանց չափ յաջողակութեամբ, Յունաց և Հու-

անյեցւոց հետեւելով: Հայաստան ունեցեր է իւր հարողումները, իւր թուկիդիտէաները, իւր Լիվիոսները և փառիաքելի է ինձ խօսիլ ըստ կարի այն անձանց նկատմամբ՝ որոնք մեր հայրենեաց պատմագիրները լինելու երջանկութիւնն ունեցած են:

Հայոց ամենէն հին պատմաբանը կրնայ նկատուիլ Մարաբաս—Վատինայ Նինուէի գրատունէն իւր օրինակած պատմութեան միջոցաւ: Այս օրինակուած գրքին բուն պարունակութիւնը անյայտ է այժմ, չը կարծուիր թէ այն ճշդիւ մեզ փոխանձուած ըլլայ և նոյն իսկ կանկածելի է թէ Խորենացին զայն բարբառովին այլափոխած չըլինի: — «Պատմագիր մը, կ'ըսէ լորտ Մաբօլէյ, աւելի նուազ ճշմարտախօս է, քան զի աւելի ճշմարտութիւն կը խօսի»։ Այս խօսքը առ երևոյթս սխալ կ'երևի, սակայն եթէ լաւ նկատուի, նրբամտութեան մը տակ ծածկուած ճշմարտութիւնը կը պարզուի: Օտար ազգերու հին պատմագիրներ ընդհանրապէս չը կարենալով հնութեան քոզը պատուել իրենց ազգին ծագումը զից և աստուածոց մէջ փնտռած և իրենց ազգի հիմնադիրներն գրեթէ միշտ աստուածացուցած են, ասով թէև իրենց ծագումը մութին մէջ թողած, սակայն աւելի ճշմարտախօս երևելու իրաւունք ստացած են քան զոր չէին կրնար ստանալ ուրիշ կերպ շարժելով, նման այն ճարտար պատկերհանին՝ որ մեր մը դէմքին վրայ իւր որդւոյն մահուան անթիւ զգացած վիշտը չըկարենալով գծել՝ սե քօղով մը կը քօղարկէ զայն և անձեռնհասութիւն մը մեծագոյն վարպետութեամբ կը ծածկէ:

Խորենացին այս մասին ճշմարիտ հակապատկեր մ'է հին օտար պատմագրաց: Նա, փոխանակ իւր ազգի հիմնադիրն աստուածացնելու, հնութեան մի հսկայն մարդացուցած է, ասով թէև իւր ազգին ծագումը, թերևս չափազանց, լրւսարանած՝ սակայն Եւրոպական այժմեան հռչակաւոր պատմաբաններէն ոմանց առջև իւր գիրքը անվերջ քննադատութեանց մատնած է. ասկէ զատ այլ և այլ պատմիչներու ՚ի վեր հանած պատմամական ճշմարտութիւններն, մանաւանդ ժամանակա-

գրութեան նկատմամբ այնքան հակառակ կը դառնան Խորենացւոյն բաժներուն՝ որով Խորենացւոյն գիրքը իւր սրժէքը մասամբ մը կորսնցնելու վիճակին կ'ենթարկուի: Սակայն ինչ և է դարձեալ անկարելի է այս մասին վերջնական վճիռ մը տալ և մենք պարտաւոր եմք զայն ապագային անաչառ դատատանին յանձնել, ինչպէս յանձնեց մեզ անցեալը: Մեք, իբրև Հայ և պէտք է ըսել նոյն իսկ իբրև մարդ և ՚ի գովեալ Հայոց, պարտիմք խոստովանիլ Խորենացւոյն անկողմնադասութիւնն ու Թուկիդիտէոսի հազուագիւտ սրժանիքն: Երբէք ազգամոլ չէ նա, ու թէև արդի պատմագիրներ տեղ տեղ թերութիւններ կը գտնեն անոր մէջ, սակայն դարձեալ յարդելի է իբրև պատմաբան, հազուագիւտ նոյն իսկ Յունաց և Հռոմայեցւոց մէջ: Ունիմք նաև Ղազար Փարպեցի մը (485), Ստեփաննոս Ասողիկ մը (1000), Վարդան պատմիչ մը (1260) և ուրիշներ, որոնց դործոց մէջ, թէև ցաւալի է ըսել, տեղ տեղ զգալի անհամաձայնութիւններ կ'երևին: Մին դէպքի մը այսինչ թուականը կ'ենթադրէ, միւսն ուրիշ թուական մը. մանաւանդ մեր պատմագիրներ օտար պատմագիրներու բոլորովին դէմ առ դէմ կը դան ստէպ և ասոնց դարձներուն մէջ բուն իսկ ճշմարտութիւնը կորսուելու վտանգին կ'ենթարկի: Սակայն այսօր մտանաւորապէս մեր ուշադրութեան կը ներկայի եղիչէ (463), երբ դարու այս անմահ վիպասանը, որու վառվառն գրիչը սրտաչարժ կերպիւ նկարագրած է Վարդանանց շահատակութիւնը, որու բարեբաղդաբար ակննատեսն վկայ եղած է ինք և գէթ այս մասին որեիցէ կասկածանաց տեղի չէ տուած: Այս իրաւ է թէ մեր նախնիք պատմութեան զարգացման հոգ տարած չեն, նոյն իսկ այնպիսի նշանաւոր դէպքեր եղած կը կարծուին որոց վրայ ակնարկութիւն մը չեմք տեսներ մեր մատենագրութեանց մէջ: Այս պակասութիւնը նոյն իսկ Խորենացին կը խոստովանի երբ կ'ըսէ, «Չի թէպէտ և եմք փոքր և թուով «յոյժ ընդ փոքու սահմանեալ և դժբութիւն տկար և «այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, «սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ

«Ի մերում աշխարհիս և արժանի գրոյ յիշատակի, զս-
րոց և ոչ մի ոք ՚ի նոցանէ պէտք յանձին կալաւ մա-
տենագրել»:

2

Սակայն թողլով այս անցեալ անտարբերութիւնը, որ
կրնայ շատ մը պատճառներու վերագրուել, նայինք թէ
այժմ Հայք կը մշակէն պատմութիւնը: Յաւալի է ը-
տել թէ պատմութեան նկատմամբ որչափ մեր նախնիք
նոյնչափ անտարբեր եմք և մեք, միայն թէ մեր այս
կացութիւնը աւելի պարսաւելի է քան մերնախնեացը:
Թէև իրօք, գպրոցներու մէջ պատմութեան ուսումը ա-
շակերտաց կ'աւանդուի, սակայն բացառիկ տեղերը թող-
լով, գրեթէ ամեն տեղ դասագրքի և մանաւանդ ար-
ժանաւոր դասատուի պակասութիւն ողորմելի կացու-
թեան մը դատապարտած են պատմութիւնը:

Նախնի դարերը կ'ամբաստանեմք իբրև անքնդունակ
խմաստախրութեան և քննադատութեան, սակայն մենք
էպպէս քնդունած եմք քննադատութիւնը որ այժմ
տարբացած է եւրոպիոյ մէջ: Թէև ըստ երևոյթիւն, քըն-
նադատական գրութիւնը կ'երևի, սակայն ասիկայ խիստ
թերի է մեղի համար: Հին ստեղծ քննադատ մը վատ-
ազգի, թերահաւատ մը կը նկատուէր, այսօր մեր մէջ
լուսամիտ Հայ մը եթէ անցեալ դէպք մը, ազգային
հինաւորաց բան մը քննադատէ՝ մոլեռանդներ, որոնք
դժբաղդաբար քիչ չեն, իսկոյն կը զրպարտեն զինք իբ-
րև մատնիչ, իբրև հայատեաց. եթէ մին ժամանակակից
բան մը քննադատելու դժբաղդութիւնն ունենայ, իս-
կոյն ամեն կողմէ շանթեր, թէև տկար, կ'արձակուին
իւր դէմ, կը զրպարտեն զինք իբրև նախանձոտ և հա-
կառակասէր: Սակայն Հայրենակից քննադատ մը այս-
պէս ամբաստանելէն ետք մենք անսիրտ եմք դէթ մեր
նկատմամբ եղած աւանդութիւններն մեկնելու, անտար-
բեր եմք մեր նախնեաց ու հայրենեաց վրայ նորանոր
տեղեկութիւններ առնելու, անոնց հին վարքն ու բար-
քը, ազգային վիճակը, կառավարական կացութիւնը,
կրօնական ուղղութիւնը քննել ուսնելու:

Թշնամի և բարեկամ այրած են մեր դրքեր զանա-
զան նկատմամբ, և մեք՝ փոխանակ արձանագրութիւն-
ները քննելու, խուզարկելու և նոյն իսկ եւրոպացի հը-
նախուզից աջակցելու, պաղ արեամբ կը նկատեմք ա-
նոնց գործերն և կը բաւականանամք սին տարրներու
վրայ հիմնելով պատմական հրաշալիքն'ը միայն երևա-
կայել և սոյն օրինակ հանդիսաւոր օրեր վերացեալ հայ-
րենիք մը հռչակել քաջի մը, բարերարի մը, կամ նա-
հատակի մը առթիւ, առանց սակայն այն քաջին, այն
բարերարին, այն նահատակին ոգին բմբւնելու: Ասիկայ
յաւալի ճշմարտութիւն մ'է որ յետագիմութեան շար-
ժառիթ և թերևս մեր կործանման պատճառ իսկ կրնայ
լինիլ:

Այսօր Վարդան մը, կրօնի ախոյեան և միևնոյն ժա-
մանակ ազգայնութեան պաշտպան մը կը տօնեմք, Վա-
հան մը կը հռչակեմք. լաւ, քաղցր է երախտագէտ հան-
դիսանալ այնպիսի քաջերու, որոնք, լաւ իմանալով թէ՝
Սկզբունքի համար մեռնիլ, նոյն սկզբունքը անմեռ
պահել է՝ լաւագոյն սեպած են մեռնիլ մարտական շը-
ռինդներու մէջ քան խեղդել այդ սկզբունքը ուրիշոր
և է կերպիւ շարժելով:

Սակայն ՚ի տես ցոյց տրուած այս հանդէսներ եթէ
կարենային Վարդանայ գործը շարունակել, եթէ ուռու-
ցիկ ու խանդավառ ճառեր կարենային յառաջագիմական
ժրագիրներու տեղը բռնել՝ այն ատեն գործը կը դիւ-
րանար անպակաս կ'ընէինք հանդէս ու ճառախօսութիւն,
որոնք սակայն արտաքին սեթեթեթներ են միայն և դժ-
բաղդաբար մեր մերկութիւնը ծածկելու անկարող:

Այն, հանդէս ու ճառախօսութիւն յառաջագիմու-
թիւն չեն աւետեր բնաւ, անոնք ժամանակաւոր զմայ-
լում մը, խաբուսիկ գուարճութիւն մը կ'արտադրեն միայն:
Սյժմեան քաղաքակրթութիւնը որչափ օգտակար, այն-
քան դժուարատար ըլաններ ունի, շարժում անհրա-
ժեշտ է, գործ հարկաւոր: Ազգային յառաջագիմու-
թեան համար պէտք է պատմութեամբ կապուել Հա-
յաստանի, պատմութիւնը պէտք է վերաշինել, անոր
մութ մասերը պէտք է լուսաբանել և ջանալ զգացը-

նել Հայ ազգի անցեալ զօրութիւնն ու համաւը Թե-
րսիսաւատ Երոպայի:

Սակայն անշուշտ սոյն ազգային պարտաւորութիւններ
անհատական զօրութիւններէ գեր 'ի վեր են, հատու-
ժական շարժումներ այն ատեն միայն կրնան նպաստել
վերաշինութեան գործին, երբ հեազհետէ միանալով
հաւաքական ոյժ մը կազմելու կը յաջողին: Առ այս
նորածին ձգտում մը զգացած է Հայ ազգը և 'ի մաս-
նաւորի քանի մը տեղեր, այս ձգտումը, այս խորհուր-
դը թերևս մարմնաւորի և սիրելի է յուսալ, գուցէ իւր
նպատակին հասնի, եթէ անյուսալի պատուարներ չկանգ-
նին իւր դէմ: . . .

Այն բացառիկ և մասնաւորեալ տեղերուն մէջ պար-
տի դանուկ և Չմիւռին. Չմիւռին, որ, 'ի վաղուց ու-
րիշ քանի մը քաղաքներու պէս, Հայ ազգի լուսաւո-
րութեան կեդրոնը և Հայ կրթութեան ու դաստիարա-
կութեան վաւարանը նկատուած է: Չմիւռին, այս ա-
նունը ժառանգելու համար, պէտք ունեցած է լուսա-
միտ առաջնորդներէ, մեծանձն բարերարներէ, հոշա-
կաւոր խմբադիրներէ, վսեմ և ազգասէր հոգիներէ,
մեծիմաստ և խոհեմ դաստիարակներէ: Այսօր, քանի
որ այս ամենը, սիրելի է բսել, չեն պակսիր իրեն, քա-
նի որ նա ունի իւր ծոցին մէջ գործօն անհատներ, հե-
տեապէս իւր նախկին անունը պահելու կրկնակի իրա-
ւունքներ և փոխադարձաբար պարտքեր ունի:

Պէտք է ուրեմն ազգովին զարգացնել ուսմունք և
գիտութիւն, արհեստ և ճարտարութիւն, 'ի մասնաւո-
րի պէտք է պատմութիւնը ուսնիմք խմաստասիրել,
վասն զի, եթէ այն լինի մեր ուղղիչ, եթէ զայն ընտ-
րեմք մեզ առաջնորդ՝ մեր վերաշինութեան գործը դիւ-
րացուցած, վարդանայ և իւր բնկերակից նահատակ-
ներուն գործը շարունակած, անոնց սկզբունքը պահ-
պանած և ամեն տարի դէպ 'ի մեր նպատակնոր քայլ
մը սուած կը լինիմք:



12



4595-4526

<< Ազգային գրադարան
NL0031474

<< Ազգային գրադարան
NL0031473

<< Ազգային գրադարան
NL0031472

<< Ազգային գրադարան
NL0031471

<< Ազգային գրադարան
NL0031470

<< Ազգային գրադարան
NL0031469

2013

<< Ազգային գրադարան
NL0031466

<< Ազգային գրադարան
NL0031465

<< Ազգային գրադարան
NL0031464

<< Ազգային գրադարան
NL0031463

<< Ազգային գրադարան
NL0031475

4374 77 80 83
75 78 81 84
76 79 82

